



Берсъ Европейская.

# ՀԱՄՇԵՆՑԻ ՀԱՅԵՐ

Ը Ֆ Դ Գ Բ Կ Ե Կ Ե Ն Ն Ի Ւ Թ Ե Բ \*

Յ. Մ Պ Ա Ր Ա Վ Ա Ս Ա Ց Ի Ր .

Ը Ջ Խ Ը Բ Հ Ե Ց Ե Ց Ո Ւ Թ Ի Ի Ւ

(Հաւատք, աւանդութիւններ ու նախապաշարումներ)

Բնութեան պատամունք

Համշենցի հայր՝ ինչպէս բնութեան ծոցում և նրան մօտիկ ապրող մարդ՝ շատ տեղերի գիւղացիների պէս՝ առտուածացրել է ամբողջ բնութիւնը։ Նրա հաւատքի, հայեացքների ու աշխարհայեցողութեան մէջ արտայալուում է ինքը մայրքնութիւնը իր խոր ու մուժ անտառներով, քչքչան աղբիւրներով, երկնքի լուսատուներով, վեհ ու խաղաղ լռութիւնով և երրեմն էլ մուժ, անբացատրելի խորհրդաւորութիւնով։ Գրաբը առաջ նա ինչ հայեացք որ ունեցել է բնութեան վրայ, հիմա էլ նոյնն է. էլի այն բնապաշտն է, բնութեան հարազատ որդին։ Կրօնը ոչնչով չի փոխել նրան, ոչինչ չի տուել նրան, բացի այն ծխական, ձեւական կանոններից ու պատուէրներից, որոնք մինչեւ այսօր էլ նրա հոգու մէջ չեն մտել։ Գեռ մինչեւ հիմա էլ նորա հոգին կրթւում, սնւում է բնութիւնից, նրա անմիջական ազդեցութեան ու ինամքի տակ։ Նա հիմայ էլ պաշտում, ծունը է դնում բնութեան առաջ։ Ճիշտ է, կրօնի ազդեցութեան տակ՝ նա ընդունում է բնութեան մէջ Արարչի դոցութիւնը, բայց ար էլ ճիշտ է, որ նա իր ամբողջ կեանքում այնքան Արարչին չի լիշտում ու չի դիմում, ինչքան իրան բնութեան։ Մուժ գիշերներին նա լուսնեակին է ման գալիս,

\*.) Տես Ազգ. հանդէս գիրք Պ. և Ե.

Նրան վառք տալիս, երաշտ օրերին՝ ամպերին է երեսը դէմ անում, նրանցից խնդրում զովարար կաթիլներ. երկար անձրևներին՝ ժամէ ժամ արևին է սպասում, թէ երբ պիտի վերջապէս ամպերի տակից գուրս գայ: Նա դրանցից, ինչպէս նաև կարկուտից, կայծակից, հեղեղից ու երկրաշարժից, աւելի շատ է վախենում քան իրա Արարջից:

Եթէ երբեմն-երբեմն Արարջի անունը տալիս է և նրա օգնութեան է դիմում, այդ էլ լինում է բնութեան արհաւերք-ների ու աղէտների ժամանակ, երբ կամ ծանր հիւանդ է ունենում, կամ հեղեղն ու կարկուտն է դալիս, կայծակն է խըփում և կամ շարժ է լինում: Մյոպիսի ժամանակ՝ երբ մոլորուած ու յուսահատ՝ աչքը չորս բաց է անում, թէ ումը դիմի, ումից օգնութիւն սպասի, միտքն է բերում Արարջին. Նրանից խնդրում դարման իր ցաւին:

Նրա ընդունած Արարիչն էլ այնքան բարի չէ, ինչքան որ պէտք է լինէր: Ահեղ ու փոթորկալի ընութեան պէս, նա էլ երբեմն ցասումներ ու պատիժներ է դրկում մարդկանց գլխին, նրանց պատժելու և խելքի բերելու համար: Կը համբերի, կը համբերի, բայց ձեռքից չի թողնիլ, մէկ օր ցոյց կը տաէ իր զօրութիւնը: Նա այնքան էլ անսահման ներող ու բարի չէ. պէտք է միշտ աշը սրտի մէջ ունենալ: Եւ գիւղացին աւելի վախենում է նրանից, քան սիրում նրան. նա իր զո՞նութիւնն ու խնդրուածքը միշտ էլ ահ ու դողով, զլուխը հողին ու քարին քսելով, զետին խոնարհելով ու երկրպաղելով է ուղղում նրան: Համշէնցիների բարբառում նոյն իսկ աղօթքը բառի տեղ «Ճունր» խօսք են բանեցնում: Նրանց բոլոր աղօթքները ծնրով են սկսում, ծնրով էլ վերջանում են: «Ճունր» —աղօթքը նրանց համար պարտաւորական բան է դարձել. նա անսպատճառ պէտք է «Ճունր» անի, թէ չէ միւս կեանքում կըստիպեն նրան շող քարի վրայ պակաս աղօթքներն ասելու: Նա զարմանում է, թէ ինչպէս կարող է մարդ չաղոթել, քանի որ թռչուններն անդամ ահօթում են: Գարնան՝ առաւտուները կամ երեկոները, երբ «ապօրշուկները» (սարեակ)

ծառի վրայ նստած, սիրուն կերպով ծլվլում են, ասում են, որ նրանք էլ «ծունը են անում»:

Երրորդութեան մասին քրիստոնէական հալացքը համշէնցի հայր ոչ զիտէ և ոչ էլ խելքը կը մտնէ: Նա ուղղակի մի Աստուած է ճանաչում՝ իրրև բնութեան Երարիչ, առանց որևէ անձերի: Քրիստոնին թէև բնդունում, պաշտում է, բայց ոչ իրրև Երարիչ, ոչ իրրև Աստուած՝ այլ իրրև նրա Որդին, նըրանից փոքրը, աւելի մարդկանց գործերը դատող և նրանց մեղքերը բաշխող: Բնութիւնը Երարչի ձեռքի գործն է համարւում, խալ մարդկանց չարն ու բարին, նրանց մեղքերը — Քրիստոնին է բաժին հանում: Առոր հագուն ոչինչ չի մնում, համշէնցի հայը նրան չի էլ ճանաչում. թէև «յանուն չօրի» մէջ միշտ կրինում է նրա անունը: Կրկնում է՝ բայց չի հասկանում: Մէկ անգամ նրանցից մէկին հարցնում եմ թէ ինչ է հասկանում «յանուն չօրի» խոսքերից: Նա մոլորուած կանգնում, ասում է, որ ոչինչ չի հասկանում. ասում է հէնց այնպէս, որպէս սովորութիւն է. վերջը միամտաբար աւելացնում է իրրև ուզում է ասել, թէ չօր Աստուծու Որդին սուրբ հողին է...

Թժրախտաբար նրանց լեռների, քարերի, աղբիւրների ու ծառերի պաշտամունքի մասին ոչինչ չիմ կարող ասել, քանի որ Կովկասեան ափերում նրանք հանդիսանում են իրրև գաղթական ասարը և ոչ իրրև երկրի բնիկներ, որ մօտիկ կապեր հաստատած լինէին երկրի բնութեան, նրա սարերի և ձորերի, նրա ծառերի ու ջրերի հետ: Մնում է բաւականանալ այն աւանդութիւններով ու նախապաշարմունքներով, որ բերել են նրանք իրանց հետ հայրենական ափերից, և որոնք վերաբերում են բնութեան տարրերին ու երևոյթներին և այն կենդանիներին ու բոլորին, որոնք իրանց այժմեան նոր տեղերում էլ կան:

## II. Երկնքի լուսատօներ եւ բնութեան երեւոյթներ.

Լուսինն ու արել, ինչպէս որ շատ տեղի ժողովրդի մէջ, սրանց մօտ էլ անմարմին ու անշունչ չմն ճանաչում: Արանք էլ են ընդունում նրանց իրրև հողի ունեցող, շնչաւոր արա-